

Ամբաս Բիւրաս

Նմբագրութիւն «Փիիւնիկ», Ի Ալեքսանդրիա



S. Bural  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ  
ՑՅԱԵԿԱՆ ԲԱՂ. 6

# ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵԲՇԱՐԹԻ 2 ԱՊՐԷԼ 1902

ԹԻԻ 45

## ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Փիիւնիկի Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆԸ լրանալու մօտ է, բայց Եգիպտոսի ու Արտասանմանի մեր բաժանորդներէն շատերը դեռ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը:

Շարաթաթերթիս հրատարակութիւնն ու առաքումը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագրէնը ՄԱՆՏԱԲՕՍԹՈՎ, մեր հասցէին:

## ՆՈՐԵՆՏԵՐՆԵՐԸ

Ժողովրդին միահամուռ կեցցէներովը փառաւորուած մեր Նորընտիր Թաղ. Խորհուրդը դեռ պաշտօնի գլուխ չ'անցաւ, որովհետեւ վաւերացման ձեւակերպութիւնները դանդաղ կընթանան: Ընտրութիւններէն ետքը Պատ. Ընտրող. Ժողովին անդեկագիրը պատրաստուեցաւ անմիջապէս. բայց, դժբաղդարար, այդ անդեկագիրը մինչեւ ցարդ չ'է ստորագրուած դէթ ամբողջութեան կողմէն: Վսեմ. Պօղոս Բաշան պիտի ստորագրէ

զայն, որպէս զի միւս անդամներն ալ ստորագրեն:

Թէ ընտրութիւնները սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն կատարուեցա՞ն. Կեր. Սրբ. Առաջնորդնի՞ս է առաջինը զայդ հաստատողներէն իր գրաւոր խնդակցութիւններովը, զորս ուղղած է Նորընտիր Թաղականներուն, շնորհաւորելու համար անոնց փառաւոր ընտրութիւնը:

Թէ քուէարկութեան ու քուէհամարի գործողութիւնները կանոնաւոր էին ու ամեն ջննադատութենէ վեր, զայդ Վսեմ. Պօղոս բաշան ալ յայտարարած է պաշտօնական թէ մտերմական շրջանակներու մէջ, եթէ բաւական չը համարենք Ընտրող. Ժողովոյ Արժ. Նախագահին համիմատ յայտարարութիւնները:

Թէ Նորընտիրները քաղաքիս հասարակութեան կարեւոր մեծամասնութեանը, չ'ըսելու համար ամբողջութեանը վստահութիւնը վայելո՞ղ. ամենքն ալ դիրքի տէր ու անկախ անձնաւորութիւններ են. ասոր համոզելու համար կը բաւէ ակնարկ մը նետել Խօթնանուն ընտրելոց ու անոնց ստացած ստուար քուէներուն վրայ, եթէ շուտով մոռցուած են Մարտ 23 ի Կիրակի օրուան Ժողովրդային ազազակները՝ կեցցե՛ Սահմանադրութիւնը, կեցցե՛ Սահմանադրական Խորհուրդը, կեցցե՛ Սահմանադրութեան պաշտպան Ժողովուրդը, կեցցե՛ Փիւնիկը, Առյնիսկ, ԿԵՑՑԷ՛ ԶԱՅԱՍՏԱՆԸ: Կա՞

ընդհանր է երբեք մոռնալ ա՛յսքան անկեղծ ու աչքքան հանդիսաւոր արտայայտութիւններ, որոնք ժողովրդին սրտէն կուզային :

Թէ ընտրութեանց արդիւնքը՝ ջախջախիչ եղաւ ժողովրդին միամտութիւնը շահագործել փորձողներուն համար. թէ այդ գեղեցիկ արդիւնքը դժգոհ թողուց լոկ ինքնակազմ Առժամեային յուսախար անդամները, այն հօտ ու միակ պատճառով որ իրենք կամովին չը հրաժարեցան այլ ինկիսն ու ա՛լ աւելի մեծ դժբաղդութեամբ մը, մէկը չ՛եղաւ իրենցմէ որ վերընտրուէ՛ր...:

Թէ՛ ընտրութեանց պատմական Կիրակին Վսեմ. Պօղոս Բաշայի նկատմամբ հանրային արտակարգ յարգանքի ցոյցերը սըրտա՞նց էին, պարզ է՝ ո՛չ թէ որովհետեւ նուպարորդին էր, այլ որովհետեւ նորին Վսեմութիւնը նոյն օրը յայտնուեցաւ աւելի քան երբեք օրինասէր ու ժողովրդական, ինք անձամբ հսկելով գործողութեանց կանոնաւոր ընթացքին:

Իսկ թէ Վսեմ. Պօղոս բաշային ձեռքովը կնքուած քուէտուփը Մանկապարտէզին սրահէն Ազգ. Խորհրդարանը փոխադրողն եղաւ Ընտրող. ժողովոյ անդամ Տ. Պերճ Օհանեան:

Թէ ընտրողներուն կամքին հակառակ իրենցմէ առնուած կեղծ քուէները պարունակող նամակներն անէացնելու հրապարակային գործողութիւնը կատարողն եղաւ նոյն ինքն Ընտրող. ժողովը, ի ներկայութեան Վսեմ, Պօղոս բաշային ու նախագահութեամբ Արթ. Տ. Յար. Աւագ Գահանայ Յակովբեանցի:

Թէ քուէտուփը — Տապանակ ուխտի — գրգալով գրկողն ու Ս. Տաճարը փոխադրողն եղաւ Ընտրող. ժողովին անդամներէն Տ. Զարեհ Սվազը, որ Առտուծո՛յ համար, մինչեւ վերջերը պինդ պահեց քուէտուփը:

Թէ քուէհամարի փափուկ գործողութիւնը կատարուեցաւ նմանը չը տեսնուած խղճմտութեամբ ու կարգապահութեամբ, թէ, վերջապէս, ընտրութիւնները բացարձակապէս սահմանադրական եղան ու հետեւաբար, գերազանցապէս օրինաւոր. ասոնք ա՛յնպիսի անժխտելի ճշմարտութիւններ են, որոնց դէմ ամեն առարկութիւն ծաղրելի է ու բողոք՝ ապարդիւն:

Հասարակութիւնը, որ գիտէ ընտրել իր արժանաւոր ժողովականները, գիտէ նաեւ համբերել ու ներել յապաղումներու, հերքէ որ այդ յապաղումները չը հակասին

օրէնքին պահանջներուն հետ: Մենք համոզուած ենք թէ՛ կարգ մ՛աղաոտ հրատարակութիւնները չ՛են որ պիտի կրնան ժողովրդին հաւատքը խախտել, եւ ոչ ալ չարամտօրէն ու հրէշային գիտումներով յերկրուած խեղաթիւրումները ...:

Ինչպէս ըսինք նախընթացով, անցեալը մոռնա՛նք, ներկային նայինք ու սպասենք որ ձեւակերպութիւնները չուտով վերջանան ու մեր նորընտիրները գլուխն անցնին իրենց պաշտօնին, պասկելու համար հանրային փափագն ու լրացնելու համար օրէնքին պահանջը:

## Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

### Տ Ի Գ Ր Ա Ն Ե Ր Կ Ա Պ Ի

(Կարապետ Պիշեցի՛ն)

Գ Ի Բ Բ Բ.

Ա.

Սիւնք խարսխած էր Պիւրէնի առջեւ, երբ հայ Յեղ. Դովիթէնեան պատգամաւորները զանի ողջունելու գացին շոգեմալ ու հրախեցին որ քանի մ'օր Արթնի մնայ իրենց հիւր. Տիգրան Երկաթ հանայնով ընդունեցաւ հրաւերին. նոյն օրը, յոյն մամուլը ծանոյց անոր Մայրաքաղաքը ժամանումը, Յունաստանին վրայ անոր թանկագին հրատարակութիւնները պատմելով, դրուսեց անոր գրագիտի գերընթիւ յայտնութիւնները, պատեց զանի իբրեւ մեծ պէս մը, նկատելով զանի գլխաւոր ազդակը կազմուելու վրայ եղող հայ ապստամբական շարժումին. Արթնագիտ անոր մէջ գտան մաքուր հելլենաստէր մը, որուն տաղանդը, ճաշակը, շնորհն ու իմացականութիւնը գիրեն կը թովէին ու կը գգուէին. Առաջին վայրկեանէն իսկ ընծայեցին անոր հրամարիտ պատգամով մը որ յարիսեմապէս պիտի չի ջնջուէր. Գրական առ-

խարհին որեարք, որոնց մէջէն *Գօսթի Բաշախա, Ժօրժ Սուրխ, Անասսա ժենասիոս, Ժօրժ Աքրասիժիս*, եւն, կը սիր'ն գահի ու կը մեծարեն իբրեւ անբաղդասելի բանաստեղծ մը ու հեղեւնապատէ մը: Համակրանքի ու հիացման միտնոյն վերաբերումը գտաւ սուրբապատէսներուն, նկարիչներուն, արձանագործներուն, դասաւորներուն ու բոլոր մեծանուն ֆաղափական մարդերուն հով, որպիսիք են. *Սգոյիսիս, Մերգորիս (1), Բաշխաթերիս, Եաշի Լա կըրիսիս* եւ ուրիշներ: Ամենուրեք կը տեսնուէր խանդավառ ու ամենաարտասարժ ցոյցերով: Յոյներէն շուրջուած այս ջերմ բնդունելութիւնն ու յարումի հաւաստիները շատ կ'օգնէին անոր ֆաղափական պատօտին, որ անհունապէս փափուկ էր ւ դժուարին եւ գոր յաջողեցնելու համար կ'աշխատէր անխոնջ եռանդով մը: Համաձայնեցաւ նախ *Գօ՛կնի Արխան*ներուն հետ ու անոնց առջեւ դրաւ իր ծրագրին գործնականութիւնը, որ կը կայանայ միացնելու մէջ Յունաստանին ու Հայաստանին ուժերը բոլրի բարբարոսութեան դէմ. որուն հաւասարապէս լուծը կը կրէին իրենք. — Արեւելի մէջ վերստնալու համար իրենց երբեմնի ազատութիւնն ու տէրութիւնը: Եւ յետոյ, ուզելով իր գաղափարները ժողովրդականացնել *Արեւմտի մէջ* բողով սեռական յիշատակ մը, որոնց ընդվզումի մղել Յոյները, սրտաբունը հրաւեր մ'ուղղելով անոնց, որպէսզ, հրապարակային արարով մը, ձուլէ երկու վաղեմի հոյր ազգերուն միջեւ խնամութեան մը վերածընդութիւնը:

Այս պատմական դէպքը Յունաստանի մայրաքաղաքը կասարուեցաւ 1896 հոկտ. 7ին Պատնասի գրական Կանառին (Սիլոդոս) մէջ, որուն նախագահը բեմին բարձրէն ժողովրդին ներկայացուց ան-

(1) Արեւմտի արդի ֆաղափապէտք.

ուանի բանախօսը, կրակոս ճառ մ'արտասանելով: Սրանք լեցուն էր ու շողաշողուն. մամուլը բովանդակ, դասական մարմինը, կանառը, գիտնական, միևսրական, ժինանսական, բարձր առեւտուրի անձնատուրութիւններ, նոյնպէս շատ մը կիկներ, իրենց ուսուցիչներուն ընկերացած ուսանողներ ու Հայեր ալ վազած էին հոն: Երիտասարդ աստեղաբանը՝ բաւախօսութեան սկիզբէն արդէն յանկուցած էր ունկնդիրներուն վստահութիւնը, որոնք սակաւ կ'ստանջանային լսելով անոր խօսիլը խրոխտ ձայնով մը, որ կ'արտացայտէր զանի կենսատուրող կորովն ու անոր ազնուական ու հպարտ կերպերը. մանաւանդ զօրեղ ցոլքը խօսքին, — որ խկոյն կը լուսաւորէր երկու ազգերուն պատմութեանը փառաւորագոյն ու ամենայուրիչ փուլերը, — կը բազմապատկէր ընդհանուր խանդավառութիւնը: Արդարեւ, Տիգրան Երկաթի սաւառնոս խօսքերը, զոր իր սեպհական հանճարը տուն կուտար իրեն, իր ա՛յնփան հարուստ, նկարուն ու միանգամայն խիստ պարզ ոնը, բոցոտ ու համեղ արտայայտութիւնը, որով կը կարենար ինք արագօրէն գծել Յունաստանին ու Հայաստանին անցեալը, ներկան ու ապագան. Հելլեններուն վրայ գործեցին մոզական ազդեցութիւնը, որ կ'ելեկսրացնէ ազգերն ու զանոնք կը մղէ իրենց գոյութեան մեծ բափի մը:

Տարփողեցին այս աստեղաբանը, որուն հրեւեակային կերպարանը խակալ կուտար ոսկեղարք, բերելով անոնց կազդուրիչ շունչ մը գեղեցկութիւններէն, մեծութիւններէն: ու դիւցազնութիւններէն հին դարերուն ու մասնակից ընելով քէ՛ երջանկութեան, բարգաւաճման ու մատուրականութեան այն դարերը՝ երկու ցեղերուն անջատման հետեւանովը մարած՝ պիտի վերածնին 50 տարուան մէջ:

ԱՆՍՀԻՏ տուած է արդէն այս բա-

նախօսութեան ընտիր քարգմանութիւնը, Տիգրան Երկաթի մահուան վաղորդայնը: Մեր խորունկ ուսումնասիրութիւնները կենսագրութեան վերլուծական մասին վերապահելով հանդերձ, խոստովանինք հոս թէ այս գեղեցիկ գործին, ինչպէս նաեւ իր բոլոր գրաւածներուն մէջ, Տիգրան Երկաթ կը յայտնուի կարգով, բանահիւս, խորհող, հոգեբան, իմաստաւէր, աստուածաբան. մեզի կը պարզէ ընկերաբանական, ցեղագրական, աշխարհագրական ու արուեստագիտական զարմանալի հմտութիւններ: Ասով իսկ — հաստատենք համաձայորէն — կը գլխաւոր մեր մեծ սնունդ մարդերուն շատերը, որոնց փառքը կ'ամփոփուի գիրենք փայլեցնող սաղանդի լոկ մէկ ձեւի մէջ: Աւելին կայ. իր սաղանդը կը հոսէր իր աղբիւրէն ու եթէ նկատի առնենք իր մասաղ սարիքը, այնքան տեսնուի մարմնի մը մէջ այնքան սկայ հանճարի մը զիմաց կը մնանք ապշած:

Մտնով փոխադրուինք պահ մը հելլենական այն հոյակապ համախաբումին ծոցը, այն անմտանալի օրը, ու պիտի թուի մեզի թէ՛ Հայաստանը վերկանգնած՝ իր աւերակներուն միջէն՝ ունէր արդէն Տէր մը, որ դաւանակցութիւններ կը նիւթէր, քաղաքական յասակագծեր կը բաղադրէր, աշխարհագրութիւնը կը գծէր, յաղթանակներ կը պատրաստէր, կը խորհէր վերաշինել քանդուած ոստաններ...: Ու այս Տէրը, — որ չ'ունէր ո՛չ թագ, ո՛չ արժուրիք, ո՛չ պալատ, ո՛չ բանակ, ո՛չ հասոյթ, եւ որ քաղցին հետ յանախակի կ'ոգորէր, — Տիգրան Երկաթն էր, որուն ըղեղային կարողութեանը մէջ էր միակ վարկը: Ու կը թուի մեզի թէ՛ Հելլենները՝ ծափերով ծածկելով ազնիւ բանախօսը՝ կ'ընդունէին դաւանակցութիւնը գոր առնի կ'առաջարկէր իրենց, զի յրսակորէն կը տեսնէին անոր օգտակարութիւնը. այսպէս, իրենք նորէն պիտի

գտնէին իրենց նախկին սահմանադրուութիւնները, պիտի նորէն տիրանային Բիւզանդիոնի, պիտի ետ, հեռո՛ւն քէլին բարբարոսները, պիտի ուրիշ թելամիներու դէմ մարտնչէին զինակցութեամբ Հայերուն, որոնք ալ իրենց ասիական պիտիւնները պիտի վերականգնէին Յոյներուն աջակցութեամբ:

Ճառին մէջ, տեղ մը Տիգրան Երկաթ արձակեց այս սողաղակը. «*Թորոհեալն զէ՛լ մեր՝ Յոյներուս ու Հայերոս՝ պարսկականութիւնն է զենք առնելը ու վար չը դնելը միմյեւ որ աշխատեալ չ'ըլլանք մեր բողոք եղբաւրները*»: Այս կերպով Յոյներուն յիշեցնելով բարբարոսներուն խոթածանքը, որ կը գործուէր Հայաստան ու Կրէտէ, Հելլենականութեան ծոցը կը վառէր աստուածային առաջին կայծը, որ շուտով պիտի բռնկեցընէր յունաբնական պատերազմը, ուր պիտի ջանային հելլենական ուժ բուն լծորդել հայկականները: Յետոյ պիտի տեսնենք թէ ի՛նչ ուրիշ միջոցներ կիրարկեց այս արտակարգ արդիւնքին յանգելու համար:

*Ահաւասիկ քանի մը հատուածներ, զորոս կը քաղենք Անահիտի թարգմանութիւնէն:*

«... Ձեր միտքը այնքան արագաշարժ է որքան ձեր մարմինը, հակամէտ էք մարդկային մտածման բոլոր խնդիրներն ուսումնասիրելու, բայց ամենէն աւելի յստակ գաղափարները կը սիրէք:

... Արեւելքը՝ առանց ձեզի՝ թաղձազին պիտի ըլլար:

... Այսպէս՝ կը ցանկաք ձեռն դուրս տարածել ինչ որ ձեզ ամէն բանէ՛ աւելի կը խանդավառէ, սպասութիւնը: Մենք՝ Հայերս՝ ձեռնէ աւելի ծանր ենք: Կարծեմ թէ ձեռնէ աւելի ճիշդ կը տրամաբանենք, բայց դանդաղ կը տրամաբանենք: Ինչ որ ալ ըլլայ, հեղ մը որ գործ մը որոշենք, զայն ի գլուխ կը հանենք կորովով մը ուր մոլեկանութիւն կը խառնուի եւ որ վատախիչի գիտեր:

... Դուք ալ մենք ալ հրաբղխային հողի մը զաւակներն ենք: Բաղդը մեր երկու ազգերուն խնայած է բռնապետներու

կառավարութեան նպատաւոր եղող ընդարձակ դաշտերու ձանձրոյթին մէջ մեծ-հալը :

... Արարատի բարձրագիւր սարահարթէն մեծ գետեր կ'իջնեն, Տիգրիս, Եփրատ, Երասխ, Հալիս. այդ ձամբաները որոնցմէ յաճախ արչաւողը մեր երկիրը կը մտնէր, մեր հայրերը կը հրաւիրէին օտար երկիրներ երթալու որպէսզի իրենց բերքերուն աւելորդը այնտեղ ծախեն: Երկու սաստիկ ձմեռներու մէջտեղ, Հայաստանը կը ծաղկի ներուժ կորսով մը: Կարճատեւ բայց յորդառատ են իր գարուններն ու աշունները: Բոլոր դառիթափներուն վրայ ուր ձիւնը նոր է հալած, անհամար հօտերու կեանքի ճիչը կը խառնուի անուշահոտութեանը ծաղիկներու զոր բուսարանն այլուր չի գտնուիր: Օդը կը թնդայ խինջիւնովը ձիւն մը որ ուրախ է զեանափոր ախոռէն դուրս ելլելուն՝ ուր ամբողջ ձմեռը փակուած մընաց: Հովը յամբօրէն կը պտրտցնէ ժայռերուն մէջ բարձր պռակած հովուի մը ձայնը կամ պարերգը զեղջիկներուն որո՞ք գետին եզերքը ճապուկ ոտքով լուացքի լաթիւրը կը ծեծեն: Մեր հայրերը առատօրէն կը քաղէին հողին պտուղները, կաթնեղէններն ու հօտերու բուրգը: Երկաթի հանքերը ճարտար դարերին կ'արտադրէին: Մեր հայրերը կարաւաններ կազմեցին: Տիկեր ուռեցուցին ու անոնց վրայ լաստեր դրին: Իրենց ցուրտ երկնքին տակ անապատի ուղտերն ընտելացուցին, զորոնք այս նոր կլիմային պատշաճեցնելու համար բնութիւնն անոնց բրդոտ երկայն մազեր տուաւ, ինչ որ չունին Արաբիոյ ուղտերը:

... Անկից ի վեր յունական գաղափարներու հոսանքը այլ եւս անդադար անցաւ ու դարձաւ մեր լեռներուն մէջ: Տիգրանի օրով, համաձայնութիւնը կատարեալ էր. Յունաստանի աստուածները, արձանները, սովետները, դերասանները, հիւրընկալուեցան Տիգրանակերտ եւ Արտաշատ: Աթէնք, Միհրդատ եւ Հայոց թագաւորը մեծ ճիգի մը մէջ միացան Հռոմի աշխարհակալութեանը դէմ: Յունաստան արդիւնքը կը քաղէր այն մտաւորական ազդեցութեան զոր Ասիոյ մէջ տարածած էր: Անոնք զոր կրթած էր իր զգացմանց ու մտածմանը համեմատ, հելլենականութեան ախոյեանները դարձան:

... Ընդհակառակն, մինչեւ այսօր մեր

ցեղին ամենէն հին կարողութիւնները կը պահենք: Ինչ ալ ըլլան մօտակայ պատահակցութիւնները, մենք լրջօրէն վախ՛ալու բնաւ տեղի չունինք այն ժողովուրդներէն որոնք բանակներ ունին, բայց զուրկ են այն յատկութիւններէն որոնցմով մենք ժամանակն ու մարդիկը կ'արհամարհենք:

... Երկու ոգիները զիրար փոխադարձաբար կը զօրացնէին. մերը ձենէ փոխ կ'առնէր նրբացում մը առանց որուն ծանրադանդաղ պիտի մնար. ձերը՝ մերինին չփոմովը՝ նրբամոլութիւններն արհամարհող ու առնական կորով մը կը շահէր:

... Կրօնքի համամանութիւնը, գրական եւ գեղարուեստական ճաշակներու համամանութիւնը յառաջ բերաւ: Մեր եպիսկոպոսները Փոփր Ասիոյ եւ Կ. Պոլսոյ յունական դպրոցներուն մէջ կրթուեցան. Աւետարանը թարգմանեցին յունարէն բնագրերու վրայէն, Պղատոնն ու Արիստոտէլն ու բունմասիրեցին: Մեր պարբերութիւնը իր ձեւին մէջ յունական դարձաւ առանց հայկական մտածումն ատով նեղելու:

... Միատիքականութիւնը որ միթիւ մտքերու մէջ եւ բռնապետական կառավարութեանց տակ կը զարգանայ, երբեք լուրջ ներգործութիւն մը չէ ունեցած մեր ուղեղներուն վրայ: Հայ դասականները ամենքն ալ յունական դպրոցին մէջ կազմուած են, եւ անոնց գլխաւորներուն, Եղիշէի, Փարպեցիի, Եզնիկի, Փաւստոսի քով կը գտնենք սա նախասիրող յատկութիւնները. ծանրախոհ վեհութիւն մը վայելչութեամբ խառն Պէտք ունի՞մ ըսելու որ ճիշդ այդ սպաւորութիւնն է որ կը կրենք ի տես Ակրոպոլին մարմարներուն:

... Բիւզանդական որմնանկարներ մեր եկեղեցւոյն պատերը զարդարեցին, յունական մեղեդիներ անոնց մէջ սաղմոսերգուեցան. ուրիշներ, աւելի թաւ, զոր մեր քահանաները շարադրած էին, Կ. Պոլսոյ մէջ սորվուեցան: Այսպէս՝ կանուխէն՝ Հայերը գնահատեցին բիւզանդական գմբէթին ամբապնդութիւնը, բայց դայն չընդունեցան իրրեւ գլխաւոր զարդ: Իրենց ճարտարապետութիւնը պահեց իր անկախութիւնը որ իրեն իրրեւ յատկանշական մոթիֆ ունէր սրածայր տանիքով բոլորչի կամ քառակուսի աշտարակ մը: Այդ ա կիւնաւոր սրածայր կտուարը, որ Արարատին գագաթը կը խորհրդապատկերէ, կը կրկնուի մեր վարդապետներուն սեւ մետաքսէ վեղարին ու մեր

քահանաներուն թաղեայ փակեղին մէջ :

... Եթէ համայնագնին ակնարկ մը նետենք տասներորդ դարուն վրայ, կը տեսնենք որ Յոյներուն եւ Հայերուն սերտ դաշնակցութիւնը իրեն արգիւնք ունեցաւ անոր փայլ մը եւ զօրութիւն մը առ զոր կորսնցուցած էր յորմէհետէ Արաբը Անատոլի հանանդները, Եգէական ծովափունքն ու գրեթէ բոլոր կղզիները դրաւած, Կ. Պոլիսը երկու անգամ պաշարած եւ Սելւանիկն ու Կրեաէն առած էր: Զուգայարդար յարձակման մը հետեւանքով, մահմետականները վանուեցան այն բոլոր գիւղերէն յոր զօրք կը սրահէին, Տաւրոսի վրայ ետ մղուեցան, Կիլիկիայէն դուրս հանուեցան: Հալէպը առնուեցաւ, Անտիոքը ազատուեցաւ, Սելւանիկը նորէն Յոյներուն ձեռք անցաւ, վերջապէս՝ մեծ ճիգէ մը յետոյ՝ Կրեաէն փրկուեցաւ: Միւսնոյն ատեն, Մակեդոնիան հելլենական ազդեցութեան շրջանակին մէջ կը մտնէր. Պուլկարները ետեւէ ետեւ մէկ քանի անգամ պարտուած, իրենց ցանկութիւնները կը սահմանափակէին՝ միայն Դանուբի հովիտը ձեռքերնին պահելու: Այսպէս, մեր երկու ազգութիւնները, իրարու վրայ կը թնկուէին, կրօնքի, վաճառականութեան եւ պատերազմներու խանդավառութեան մէջ միացած, անկորուստ պահեցին, փառաւոր գործակցումով մը, ժառանգութիւնը այն յատկութիւններուն որոնց այսօր աւանդապահներն ենք մենք:

Այս բանախօսութիւնը, որ ուժգին ու խորունկ սպառութիւն մը թողուց Աթենացիներուն վրայ, մեզի վերջուումը կը բերէ նմանօրինակ դէպքի մը, որ դարձեալ Յունաստան կասարուած էր, երբ Աթէնք, 15 դար առաջ, մեր Դափր իմաստաւէրը յունարէն արտասանեց ԽԱԶԻ ՃԱՌԻ, որուն համար ԱՆՅԱԴԹ՝ մա'դիրը խլեց ժամանակին Հելլենացիներէն: Իսկ Տիգրան Երկար, իր այս հուշակատոր բանախօսութեան յաջորդ օրը կոչուեցաւ Պառնասի կանառին ՊԱՏՈՒՍԿԱԼ ԱՆԴԱՄ: Մայրաքաղաքին բոլոր թերթերն արագրեցին իր նաւը, որ հիացման առարկայ եղաւ ամեն ուրեք, ցամաքին վրայ, Արեւիկեղազոսի կղզիներուն մէջ ու արտասահ-

մանը: Անկից ի վեր, մեծ ժողովրդականութիւն ստացաւ Յոյներուն մէջ, որոնք կը սիրէին զինք իբրեւ գաղափարային էակ մը, եւ որոնք հիմայ կը մեծարեն անոր նուիրական յիշատակը սեռակ մը խորհրդակրօն պաշտումով:

Աթէնքի դպրութեանց ու գիտութեանց մարդերուն — որոնք անոր գեղեցիկ տաղանդը նուիրագործեցին — յարգանքէն զատ՝ Արիստոսներն իրենք ալ, անոր բաղաձայն ընդարձակ հայեացիներուն վրայ հիացած, ընծայեցին ամենաբարձր պատիւ մը, բանալով անոր առջեւ իրենց ազգային մեծագոյն Գոմիթէին Էթնիթի Հէթիթի Արդներն ու զանի կարգելով իրենց ԳՈՐԾՕՆ ԱՆԴԱՄ ՄԸ: Ահա՛ այս եղաւ նշանը դաշինքին, զոր ինք կը բաղաւ կնիք Յունաստանին ու Հայաստանին միջեւ:

Այս եղաւ Ելլադայի մէջ պայմարին սկիզբը տարած մեծ յաղորդութիւնը, պատերազմելով ԳՐԶՈՎՆ ՌԻՆՍՍՔՈՎԸ, հայկական պատճառներով կը պատկանէր գերբնական ոգորումով ու անձնութեամբ, իր բացարձակ զրկանքին միջէն, որ աւա՛ղ, ծովապահութեան կը տանէր զինք: Սակայն, ինք երբէք յայտնի չէր ընէր իր թուառութիւնն ու այնքան լաւ գիտէր բարձր ու հպարտ բռնել Հայաստանին ու ընտանիքին վաշկը, որ ամեն տեղ թողած էր սպառութիւնը մեծափառքամ ազնուականի մը, որ անսպառելի հասոյթներ ունի ձեռքին մէջ, Հայերուն պատկանութիւնը կազմակերպելու համար: —

(Շարունակելի)

Ս. ԲԻԻՐՍՏ

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

— ՆՈՐԸՆՏԻՐ ԹԱՂ. ԵՈՐՀՈՒՐԳԸ Ժամ առաջ պաշտօնին զլուխն անցած տեսնելու հանրային փափագը հետզհետէ կը շեշտուի:

Այս փափագը թարգմանելու պաշտօնով չորս անձերէ բաղկացած պատգամաւորութիւն մը ներկայացաւ Մարտ 31ին, երկուշաբթի իրիկունը, Ընտրող Ժողովին Ա.քփ. Նախագահին, որ, 'ի պաշտօնէ յայտարարելէ ետքը կիրակի օրուան փառաւոր ընտրութեանց օրինաւորութիւնը, խոստացաւ անյապաղ գործադրել սալ օրինական ձեւակերպութիւնները:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՄԵՐ ՄԻԹԻՆԿ ՄԸ, կ'ըսէ Ա.Թէնքէն քաջուած Մարտ 31 թուականով հեռագիրը, որոշեց խնդրել Մեծ Տէրութիւններէն որ միջամտեն Մակեդոնիոյ մէջ Պուլկարիերուն գործած խժգժութիւնները դադարեցնելու համար:

ՄՈՍԿՈՒՍՅէն ամսոյս 1ին քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ուսուցչուհի մը փորձած է առջի օրը սպաննել ոստիկանացիներ, բայց չըջանարին հարուածը վրիպած է ու ինքն ալ ձերբակալուած:

— ԹՈՒՐԿԻԱն զէնքի կանչած է 90,000 օժանդակ (ըէտիֆ) գօրք, իբր թէ մարզանքի համար. բայց Տէրութիւնները կը հաւատան թէ այդ ահագին պատրաստութիւնները Մակեդոնիոյ դէմ են, ուր սպառնաւորական խմորումը սպառնալից հանդամանք կ'ստանայ: Այս գործնան իսկ կ'ըստպատուի պատերազմին պայթումը:

### ՄԱՀԱԳՈՅԺ

Տ. ՂԱԶԱՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ, փարսուոր Կամսարական Եղբարց վանառասան ու Ասենաղաբի սեղիս Աղփասախընամ ընկերութեան Տնօրէն ժողովին, Մարտ 28ին ուրբաթ առաւօսը մեռաւ 35 տարեկան, Տիար Միհրան Ղազարուեանի բնակարանը, խոր սուգի մէջ բողոլով իր անմխիբար, այրին ազգականներն ու բարեկամները:

Յուղարկաւորութիւնը սեղի ունեցաւ նոյն օրը կէս օրէն ետք ժամը 4ին: Դագաղը ծածկուած էր զանազան պսակներով, որոնց մէջէն աչքի կը զարնէին Աղփասախնամինն ու Տեարց

Աւմենակ եւ Տիգրան Կամսարական Եղբարցը:

Ողբացեալն արդէն ամիսներէ ի վեր կը սառապէր անողոք հիւանդութենէ մը, գոր կարելի չ'եղաւ դարմանել, հակառակ Ազն. Տիար Տօֆ. Մախոխեանը յաշկապէս փաղափս կանչուելուն, Տօֆ. Բեքրիստիս ու Տօֆ. Վալասօբուլոյի հետ փանիցս խորհրդակցութիւններ կ'ստարուելուն:

Վերջերս Տօֆ. Տօֆ. Յ. Թէօճիլ ու Վալանոս կը դարմանէին. առաջինը մանաւանդ միշտ փոփոք էր գրեթէ:

Տիկլն Աննա Ղ. Ասրունի, ողբացեալին Այրիսն ու իր մայրը խմբագրութեանս միջոցս իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն Տեարց Աւմենակ եւ Տիգրան Կամսարական եղբարց, որոնք գրեթէ անկաշիւն ըրած են իրենց սիրելի պատեհիւն թժեկութիւնը ձեռք բերելու համար: Նոյնպէս հրապարակաւ իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր բարեկամներուն, որոնք ներկայ գտնուեցան յուղարկաւորութեան:

ՎՆՏԱԿՅՈՒԹԻՒՆ. — Ողբացեալ Ղ. Ասրունիի սարածամ մահովը զգալի կորուստ մը կունենայ փաղափս երիտասարդութիւնը, որուն մէջ իր յատուկ սեղը կը բռնէր ողբացեալը, իր ազնիւ կերպերովը համակերելի Եղած ամենուն ու ամենէն ալ սիրուած:

Խմբագրութիւնս իր խորին վշտակցութիւններն արտայայտելով համբերութիւն կը մաղթէ սգաւոր Ասրունի Տան:

### « ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ' Հայերէն, թէ' գաղղիերէն և թէ' ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, ԽԻՍՏ ԶՍՓԱԽՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

### ՏՕԴԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ



Ամերիկեան բժիշկ եւ վիրաբոյժ, մասնաւորապէս կը դարմանէ ջղային սկարուրիւնները ելեկտրականութեամբ, նաեւ կուրծքի, եւ ներքին գործարանաց հիւանդութիւնները : Աղբասներուն կը նայի ճիշտաբար: Առ այժմ կը բնակի «Rue el Caied Gobar» անուն փողոցին վէջ թիւ 24 սան 2րդ յարկը, Մօրէլի խանութին մօտը: Ժամերը 10-11 կէս օրէն առաջ, եւ 3-5 կէս օրէն յետոյ:

Յիշեալ Տօգթօրը նաեւ սարկներու ուսումնասիրութեամբ լիովին համոզուած ըլլալով թէ կարելի է առաջուրնէ որոշել սեռի սեռակը ըստ կամսայն ծնողք որ ու եւ է պատճառաւ հախանծար կը համարին մանչ կամ աղջիկ զաւազ ունենալ, Իրեան թէ՛ անձամբ եւ թէ՛ նամակաւ իրեն զիմել եւ այդ մասին ձ՛ոք առած ամենա-

պարզ եւ միանգամայն ամենագոհացուցիչ միջոցներէն օգտուիլ: Իր պայմանները դիրամասչելի են, եւ վարձատրութիւն չի պիտի պահանջուի ակնկալուած արդիւնքը երեսան գալէ առաջ:

Նամակները պէ՛տ է բովանդակեն նամակագրուել, եւ ուղղուին հետեւեալ հասցէին. *Dr. S. V. Ezékélian, Post. Restante, Alexandrie (Egypte):*

### Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ԿԱԶԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻԶԲ

*Tapissiers et décorateurs*

Քաղաքիս երեսելի հայ տուներուն ծանօթ յանախորդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն սեռակ կահեղէններ, վարագոյր, եւն-

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել, Աղդարիւն, Թիւեյ-Էյ-Զահապի, *Attarine Ruelle-el - Zababy*

## SALAMANDER

### ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանք

Աձեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի դէներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսգօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մեհշիէ Ապուսսուս փողոց թիւ 10

## L'ALLIANCE

### Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանք